

ազատ չէր դուրս ելնելու, կին եւ մարդ պահապաններ էին, ետեւէն կ'ելնէին, որ յանկարծ չի փախչի, վերջապէս խեղճ աղջիկը իր հօր տան մէջ պատուաւոր բանտի մը մէջ էր: Շատ անգամ լուռ եւ անմունչ ժամեր կ'անցնէր սարաւանդի հովանոցի մէջ ծովուն եւ ճամփուն վրայ սեւեռեալ աչքերը, եւ երբ խաւարը տիրեր՝ փոքր հառաչանք մը միայն կը ձգեր եւ իր սենեակները կը քաշուէր: Իբրեւ թէ ատելի եղած էին իրեն ամէն մարդ, ամէն այցելութիւն կը մերժէր, վասնզի մինչեւ Ռշտունեաց եպիսկոպոսն ուրիշ բան չունէր իրեն քարոզելու այլ թէ լաւ կը լինէր եթէ ամուսնանար Անձեւացեաց իշխանին հետ: Միմիայն միտթարութիւն կար իրեն, որ երբեմն նուիրակ մը յանկարծ կ'երեւէր, Ս. Կարապետի վարդապետ մը, որ տարին մէկ կամ երկու անգամ կ'ուզար՝ նամակ մը կը յանձնէր, որ Օրիորդին կ'ուտայինք. այդ օրհնութեան գիրն էր, որ իր երեսին զուարթութիւն կը բերէր: Բայց վերջապէս այս աշնան ետքերը՝ յանկարծ օր մը նոյն վարդապետը երեւցաւ, իւր նամակը տուաւ եւ գնաց. ահա այդ նամակը այս անգամ, որ առաւ Օրիորդը՝ քանի մը օր ամենեւին չէրեւցաւ եւ դուրս չելաւ իւր սենեակներէն: Երբ չորս-հինգ օրէն վերջը զինք տեսանք, աչքերը խորն էին մտած, անկարագրելի տխրութիւն մը նոցայ մէջ կ'երեւէր, եւ նոցայ շուրջը կապոյտ գիծ մ'էր պլորած: Է՛լ սարաւանդի հովանոցը չելաւ, իր ծանր եւ ազնուական ժպիտը մէկ մ'էլ չի տեսնուեցաւ, եւ իւր անուշութիւնը՝ խստութեան եւ արհամարհանաց փոխուեցաւ: Մենք՝ իւր հայրենական հաւատարիմներն չէինք կրնար մօտենալ այդ Օրիորդին, որ գրկերնիս մեծցեր էր, քաղցրութեան աղբիւրն էր, ոչ ժպիտ մը եւ ոչ խօսք մը ունէր մեզ համար: Եւ այդ վիճակի փոփոխութեան վրայ ամիս մը հազիւ անցաւ, տեսանք օր մը փառաւոր խումբ մը եկաւ հասաւ Ոստան, Վասպուրականի բոլոր իշխանք՝ Անձեւացեաց Նախարարը գլուխնին, եւ մենք ապուշ մնացինք, երբ ըսին թէ Օրիորդը հարս տանելու եկեր էին, մենք որ ամենեւեւին պատրաստութիւն չունէինք: Չարմանքով տեսանք, որ Տիրուհին ելաւ իւր սենեակներէն խստիւ քօղարկեալ. բոլոր իւր հայրենի ծառայներն ժողովուած՝ ամէնքս կուլայինք, չի տեսանք իւր երեսը. միայն սպասուհիներն ավստերով բերին իր ընծայներն, այսինքն բոլոր ստացուածքը ծրարներ ըրած եւ անուննիս վրան նշանակուած եւ իր